

Ի՞նչն է :

Ի՞շքին ետև ականջն է մարդուս փափուկ և բարակ գործարանը . ասոր զգուշութեանը համար գիտնալու է որ ինչ և իցէ սաստիկ ու շարունակեալ ձայն՝ մարդս շուտով կը խլացընէ . իսկ բոլորովին լրութիւնն ալ մելամաղձութեան՝ մէջ կը ձգէ . ուրեմն ընդհատ և չափաւոր ձայն մը խիստ ախորժելի , անվնաս և առողջարար կը սեպուի մարդուս լսողական գործարանին : Իսկ անոնք որ շարունակ աղաղակի ու շփոթ և սաստիկ ձայներու մէջ են՝ ինչպէս զինուորները , թնդանօթաձիգները ¹ , ու երկաթագործները , և այն , որպէս զի բոլորովին չկորսնցընեն լսողութիւնին՝ պէտք է միշտ քիչ մը բամբակ դընեն ականջաց ծակին բերանը : Իրադարաններու ձայնը թէպէտ և շատ մատենագիրներ կը գովեն իբրև անվնաս , ինչուան քանի մը հիւանդութեանց ալ դեղ , սակայն առողջութեան վնասներէ ալ ազատ չկրնար սեպուիլ . վասն զի մէկ մաղձուտ տիսուր և անընդհատ եղանակ մը զմարդ ախոնդանոտութեան՝ , արդանդացաւութեան՝ , անձկութեան կամ սրտնեղութեան՝ մէջ կը ձգէ , մանաւանդ թէ որ մտիկ ընողը զգայուն ու ջղոտ կազմուածքով մարդ ըլլայ : Իւթէպէտ տրտմած մարդուն մաղձը փարատելու համար ուրախական եղանակներ զարնելը շատ աղէկ է , բայց նայելու է որ չափազանց ըլլայ :

Ի՞սոնցմէ զատ կան նաև ան տեսակ ականջի տկարութիւններ ալ որ մարդուս լսելեաց գործարանին ծակը քիչ մը կամ անզգալի կերպով մը գոցելով սաստիկ կը ցաւցընեն . ինչպէս թէ որ մէկուն արիւնը խիստ շատնալու ըլլայ մանաւանդ զլխուն մէջ , թանը ² ,

քանի մը տեսակ վերքերը , սաստիկ քրտինքը , քամիները , և ասոնց նման քանի մը ուրիշ հիւանդութիւններ ալ . այսպիսի ատեններ մարդ ամէն ջանկը պիտի ընէ որ ականջին ցաւուն բուն պատճառը վերցընէ և ականջին ծակը բանայ , պարզ ջուր կամ եղ կաթեցընելով ցաւած տեղը , կամ մամնաւոր այն բանիս համար շինած գործիքը գործածելով . որով և ցաւն ալ մէկէն կը դադրի :

Ի՞կանջի հիւանդութիւններէն մէկ քանին ալ սովորական ու յաճախ պատահած հիւանդութեանց կարգը կը սեպուին . ինչպէս են մէկ ականջին քան զմէկալը շատ աւելի լսելը , անբնական ականջի խլութիւնը՝ որ ականջին ներքին աղտոտութենէն կը պատճառի , և ամէն օր մաքրելով շուտ կ'անցնի : Դարձեալ թէ որ մէկուն ականջը խիստ սուր ըլլայ՝ շատ հարկաւոր է որ ականջին մէջ քիչ մը բամբակ զնէ միշտ՝ ականջին սաստիկ լսողական զօրութիւնը չափաւորելու համար , որ վերջը խլութիւն չպատճառէ . իսկ որուն որ ականջը խիստ ծանրալուր է , կրնայ լսելափող՝ ըսուած գործիքը գործածել՝ որուն արտաքին բերանը լսյն ու ականջին դրածը ամենապատիկ ծակ մը ըլլալով , օդին ամենաբարակ թրթումունքն ալ շուտով իր պղտի ծակէն կը հացընէ խուլերուն ականջէն ինչուան ըղեղն :

1 Tromba acustica.

Զենոն փիլիսոփայն ըսեր է . թէ բնութիւնը մեզ մէկ բերան տուաւ ու երկու ականջ , որ երկու լսենք մէկ խօսինք . այսինքն շատ չխօսինք . ամէն բանի պատասխան չտանք :

Տաճկի առակն ալ կ'ըսէ .
Սէօզիւն սարաֆը օլ , ալ սիւքիւթիյէ ,
Չիւն քուլաք եքի , ոիլ պիր՝ իքի տիյնէ , պիր
սէցյէ :

1 Գործ հէլք : Mania 4 Isterismo.
melanconica.

5 Թասոս :

2 Թռէմն :

6 Մայուսլ :

3 Սէլք : Ipocondria.